ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 55-Լ **«28» նոյեմբերի 2023 թ.**

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 1997 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության կանոնադրությունում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թ. նոյեմբերի 28-ի N 55-Լ հրամանի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հրամանով	Ռուսաստանի Դաշնության գիտության և բարձրագույն կրթության նախարարության հրամանով
«____»_____ 2023 թ. № _____	«____»_____ 2023 թ. № ____

Փոփոխություններ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության կանոնադրությունում

1. 3.2-րդ կետը լրացնել 3.2.15-րդ ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«3.2.15. Համալսարանն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանրակրթական գործունեություն՝ ըստ տարրական, հիմնական և ավագ դպրոցների կրթական ծրագրերի:»:

2. 4.2-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ խմբագրությամբ.

«Համալսարանը որպես կառուցվածքային միավոր ներառում է հանրակրթական դպրոց, որը չի հանդիսանում անկախ իրավաբանական անձ: Հանրակրթական դպրոցի կանոնակարգը հաստատում է համալսարանի Գիտական խորհուրդը:»:

УТВЕРЖДЕНЫ	УТВЕРЖДЕНЫ
приказом	приказом
Министерства образования, науки, культуры и спорта Республики Армения	Министерства науки и высшего образования Российской Федерации
от «____»_____ 2023 г. № _____	от «____»_____ 2023 г. № ____

Изменения в устав
Государственного образовательного учреждения
высшего профессионального образования
Российско-Армянского (Славянского) университета

1. Пункт 3.2 дополнить подпунктом 3.2.15 следующего содержания:

«3.2.15. Университет вправе осуществлять общеобразовательную деятельность по программам начальной, основной и старшей школы в соответствии с законодательством Республики Армения.».

2. Пункт 4.2 дополнить новым абзацем следующего содержания:

«В состав Университета в качестве структурного подразделения входит общеобразовательная школа, не являющаяся самостоятельным юридическим лицом. Положение об общеобразовательной школе утверждается Ученым советом Университета.».